

ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու



ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեղինակի կողմից քննարկման առարկա են դարձել խարդախության՝ որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության, քրեաիրավական էությանն ու որակման առանձնահատկություններին վերաբերող հարցերը: Հոդվածում որոշակի քննարկման են արժանացել ինչպես իրավաբանական գրականության մեջ նշված հանցակազմի որակման խնդիրներին վերաբերող տեսակետները, տարբեր հեղինակների արտահայտած կարծիքներն ու վերլուծությունները, այնպես էլ քննարկվող խնդրի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումները:

Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում՝ ներկայացվել են առաջարկություններ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի բարեփոխումների և խարդախության գործերով հանցագործությունների որակման համար:

Հիմնաբառեր- խարդախություն, խաբեություն, վստահությունը չարաշահել, հանցակազմ, գույք, հափշտակություն, կաշառք ստանալու պատրվակ:

Խարդախությանը՝ որպես հափշտակության եղանակի, բնորոշ են հափշտակության հանցակազմի բոլոր հատկանիշները:

Եթե փորձում ենք որոշակի համեմատություններ անցկացնել խարդախության հանցակազմի՝ դեռևս ՀՀ 1961թ. քր. օր.-ի 89-րդ հոդվածի և ՀՀ գործող քր. օր.-ի 178-րդ հոդվածի օրենսդրական բնորոշումների միջև, ապա դժվար չէ նկատել այն փոփոխությունները, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի ընթացիկ բարեփոխումներին զուգահեռ, տեղ են գտել նշված հանցակազմում: Կատարվող վերլուծություններից պարզ է դառնում, որ դրանցում առկա են առաջին հայացքից ոչ այնքան էական թվացող աննշան տարբերություններ. եթե ՀՀ գործող քր. օր.-ի 178-րդ հոդվածը խարդախությունը բնորոշում է որպես. «խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը», ապա ՀՀ 1961թ. քր. օր.-ի խարդախության հանցակազմում՝ «հափշտակություն» եզրույթը բացակայում էր: Այստեղ, խարդախությունը բնորոշվում էր որպես՝ «Ուրիշի գույքին տիրանալը կամ գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու միջոցով»: Փաստացի, հիմնական տարբերությունը ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածների միջև, կայանում է տերմինաբանական, իսկ առավել կոնկրետ՝ «ուրիշի գույքի հափշ-

տակություն» և «ուրիշի գույքին տիրանալ» բառակապակցությունների մեջ, որը՝ քրեաիրավական իմաստով, ունի էական նշանակություն: Այս առումով, իրավաբանական գրականության մեջ այն տեսակետն է արտահայտվել, որ «հափշտակություն» և «տիրանալ» եզրույթները չեն հանդիսանում համարժեք (հավասարագոր) հասկացություններ, և «տիրանալ» եզրույթը ոչ միշտ է հանդես գալիս իբրև «հափշտակություն»: Օրինակ, կարելի է որոշակի կարճ ժամանակահատվածով «տիրանալ» ուրիշի գույքին, սակայն չունենալ այն հափշտակելու ոչ մտադրություն և ո՛չ էլ դիտավորություն: Օրենսդիրը, ըստ երևույթին, նկատի ունենալով նորմի դիսպոզիցիայում առկա վերը նշված տարբերությունը, անհրաժեշտ է համարել ընդգծել «տիրանալ» եզրույթը՝ փոխարինելով այն «հափշտակություն» եզրույթով, որը՝ իրավաբանական տեխնիկայի առումով համարվել է *արդարացված*¹:

Չնայած այն հանգամանքին, որ իրավաբանական գրականության մեջ տարածված է մնում այն տեսակետը, ըստ որի՝ խարդախության հանցակազմի առարկա կարող է հանդիսանալ ոչ միայն ուրիշի գույքը, այլ նաև գույքի նկատմամբ իրավունքը՝ համարելով այն որպես տվյալ հափշտակության եղանակի բուն *յուրահատկությունը*², բայց, այնուամենայնիվ, նշված հանցակազմի դիսպոզիցիայում տեղ գտած՝ «ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը» ձևակերպումը, որոշակի իմաստով, արդարացի քննադատության տե-

դիր է տվել: Առկա տեսակետի համաձայն՝ խարդախության հողվածի դիսպոզիցիայում գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու մասին նշումն ավելորդ է, քանզի ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելով՝ հանցավորն արդեն իսկ հնարավորություն է ունենում այն տնօրինելու կամ օգտագործելու, թեկուզև գույքը գտնվի մեկ այլ տեղ, և հանցավորը, փաստորեն, չի տիրանում նրան: Պարզ ասած, այդ իսկ պահից առկա է ավարտված հափշտակություն: Մինչդեռ, օրենքի ձևակերպումն այնպիսին է, որ կարծես թե գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը հափշտակությունն չէ³: Ուստի, այդ առումով, հավանաբար ավելի նպատակահարմար կլիներ, եթե խարդախության հանցակազմի վերը նշված ձևակերպումը ընդհանրապես հանվեր և ՀՀ գործող քր. օր.-ի 178-րդ հոդվածի դիսպոզիցիան վերաձևակերպվեր հետևյալ բովանդակությամբ. «*խարդախությունը՝ ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով*»:

Խարդախության հանցակազմում՝ խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը, ըստ էության, հանդիսանում են իբրև՝ գույքը հափշտակելու (տիրանալու) կամ գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու միջոցներ (եղանակներ), որոնք, քրեաիրավական տեսանկյունից, ունեն իրենց յուրահատուկ մեկնաբանությունները:

Խարդախության դեպքում ուրիշի գույքը հափշտակելը այդպիսի գույքը հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելն է, ընդ որում, դարձնելն իրականացվում է ոչ թե սեփականատիրոջ կամ գույքը տիրապետող այլ անձի կամքին հակառակ գույքը վերցնելու, այլ՝ վերջիններիս կողմից խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով «կամավոր» հանձնելու արդյունքում: Այլ կերպ ասած, խարդախության դեպքում անձը՝ հանցավորի իրական մտադրությունների նկատմամբ մոլորության մեջ գտնվելով, իր մոտ գտնվող դրամը կամ նյութական արժեքները հանցավորին փոխանցելիս՝ չի գիտակցում, որ իրեն խաբում են⁴: Այսինքն, խաբեությունը՝ համարելով իբրև խարդախության հանցակազմի պարտադիր հատկանիշ, այն դիտվում է որպես՝ գույքը տուժողի կողմից հանցավորին կամավոր հանձնելու միջոց⁵:

Խարդախության իրականացման առավել քիչ տարածված տեսակը հանդիսանում է՝ վստահությունը չարաշահելը: Այստեղ, հանցավորն օգտագործում է այն փոխադարձ վստահության հարաբերությունները, որոնք ստեղծվել են հանցավորի և սեփականատիրոջ (կամ գույքը տիրապետող այլ անձի) միջև, և որոնց հիմքում, որպես կանոն, ըն-

կած են պայմանագրից կամ համաձայնագրից բխող որոշակի քաղաքացիաիրավական կամ աշխատանքային հարաբերություններ⁶:

Հեղինակներից՝ Վ.Ա. Վլադիմիրովն, արդարացիորեն, իր բացասական կարծիքն է արտահայտել մի շարք հեղինակների մոտ հանդիպող այն տեսակետի վերաբերյալ, որոնք վստահությունը չարաշահելը, նույնականացնում են տուժողի՝ «ոյուրահավատության չարաշահման» հետ: Նա կարծում է, որ վստահությունը, ընդհանուր կանոնի համաձայն, ենթադրում է մարդկանց միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների առկայություն, վստահություն ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի նկատմամբ, իսկ ոյուրահավատությունը՝ հանդիսանում է մարդկային բնավորության հատկություններից մեկը⁷:

Վստահության չարաշահումը դրսևորվում է այնպիսի վարքագծով, որով հանցավորն իր ապագա մտադրությունների կամ վարքագծի կապակցությամբ, մոլորության մեջ է զցում գույքի սեփականատիրոջը կամ գույքը տիրապետողին՝ վստահություն առաջացնելով նրանց մեջ, իսկ վերջինս՝ «իր կամքով», գույքը հանձնում է հանցավորին՝ համոզված լինելով, որ այն կվերադարձվի, կամ դրա դիմաց ծառայություն կմատուցվի, կամ այլ ձևով կփոխհատուցվի: Այսպիսով, եթե խաբեությունը դրսևորվում է անցյալի կամ ներկայի փաստերը խեղաթյուրելով, ապա վստահությունը չարաշահելը՝ վերաբերում է ապագային:

Բողոքովին այլ է խաբեության դերը խարդախության հանցակազմում այն դեպքում, երբ հանցավորն՝ օգտագործելով երեխաների, դեռահասների, հոգեկան հիվանդների, որոշակի ֆիզիկական արատներով տառապող անձանց (կույրերի, խուլերի ու համրերի) վստահությունը, խաբեությամբ հափշտակում է նրանց պատկանող գույքը: Տվյալ դեպքում կատարվածը, որպես կանոն, ենթակա է որակման իբրև գողություն, այլ ոչ՝ խարդախություն, քանի որ գույքի զիջումը հանցավորին, ըստ էության, տեղի է ունենում առանց տուժողների գիտակցման: Խարդախությունը նաև պետք է տարբերել գողությունից նրանով, որ վերջինիս դեպքում հանցավորը նույնպես կարող է դիմել խաբեության՝ բնակարան, պահեստարան կամ շինություն մուտք գործելու և գույքը գաղտնի հափշտակելու նպատակով: Տվյալ դեպքում՝ խաբեությունը, ընդամենը, հանդես է գալիս հետագայում գույքը գաղտնի վերցնելուն ուղղված պայման, որի ժամանակ տեղի չի ունենում նյութական արժեքների փոխանցում սեփականատիրոջից հանցավորին: Այսինքն՝ խաբեությունը, որը չի հանդիսանում գույքն

անմիջական հափշտակելուն ուղղված միջոց, այլ, օրինակ, հանցավորի կողմից այն օգտագործվում է որպես գույքի նկատմամբ ավելի հասանելի դառնալու հեշտ միջոց, ապա արարքը չի կարող որակվել որպես խարդախություն⁸ :

Մեկ այլ դեպքերում, երբ հանցավորի կողմից խաբեությունն օգտագործվում է որպես ուրիշի գույքին հասանելի դառնալու միջոց, և գույքի սեփականատիրոջ, գույքը տիրապետողի կամ մեկ այլ անձի կողմից պարզվում «կամ բացահայտվում» են վերջինիս իրական մտադրությունները, իսկ հանցավորը՝ այն գիտակցելով, արդեն բացահայտ, կրկին շարունակում է հափշտակել ուրիշին պատկանող գույքը, ապա հանցավորի իրականացրած գործողությունները պետք է որակվեն ոչ թե խարդախություն, այլ՝ կողոպուտ⁹ :

Գողություն, այլ ոչ՝ խարդախություն, պետք է որակվեն նաև փորձելու նպատակով խանութում վերցված հագուստի պարագաների հափշտակության այն դեպքերը, որոնք հանցավորին տրվել են ոչ թե օգտագործելու, այլ միայն փորձելու նպատակով¹⁰ : Չի կարող ուրիշի գույքի հափշտակությունը համարվել խարդախության միջոցով կատարված, երբ այն ոչ թե փոխանցվել, այլ վստահվել է հանցավորին՝ թեկուզև ժամանակավորապես հսկելու նպատակով¹¹ :

Խարդախության հանցակազմի հետ կապված մի շարք կարևոր հարցերի պարզաբանման նպատակով՝ առանձնահատուկ նշանակություն ունի նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումը:

Խարդախության հանցակազմը ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանել է՝ Լիա Արտյոմի Ավետիսյանի գործով 2011թ. փետրվարի 24–ին կայացված թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշմամբ (այսուհետ՝ Լ. Ավետիսյանի գործով որոշում), որի համատեքստում էլ քննարկվել են խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմին վերաբերող առանձնահատկությունները:

Լ. Ավետիսյանի գործով որոշման 25–րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝ «... օբյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն»:¹² ՀՀ վճռաբեկ դատարանի վերոշ-

արադրյալ դիրքորոշումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ, թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ հանգամանքի առումով էական նշանակություն կարող է ունենալ այն հարցը, թե գույքն ուրիշին հանձնելու գործում ով է նախաձեռնություն դրսևորել: Մասնավորապես՝ արդյո՞ք գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնելու տուժողի մտադրությունն առաջացել է հանցավորի կողմից նրան համոզելու և հորդորելու արդյունքում: Խարդախության դեպքում հանցավոր ներգործությունն իրականացվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելով: Այլ խոսքով՝ խարդախության հանցակազմն օբյեկտիվ կողմից դրսևորվում է կատարման հատուկ եղանակով՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով: Խաբեությունը գույքի սեփականատիրոջը կամ գույքը տիրապետողին մոլորության մեջ գցելու նպատակով իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրումն է կամ ճշմարտության մասին լռելը, որը դրսևորվում է երկու եղանակով՝

ա) իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրում,

բ) ճշմարտության մասին լռել:

Իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրման դեպքում հանցավորը գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի մոտ սխալ պատկերացում է ստեղծում գույքը նրա տնօրինությանն անցնելու օրինական հիմքերի մասին և առաջ է բերում գույքի հանձնման օրինականության պատրանք: Խաբեության այս տեսակը կոչվում է նաև ակտիվ խաբեություն, քանի որ ենթադրում է տուժողի վրա հանցագործի առավել ակտիվ ներգործություն և կարող է իրականացվել կամ բանավոր խոսքի միջոցով, կամ դրսևորվել որոշակի գործողություններով:

Ճշմարտության մասին լռելու դեպքում հանցավորը գույքի սեփականատիրոջը կամ գույքը տիրապետողին չի հայտնում իրավական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների մասին, ինչի հետևանքով վերջիններս մոլորության մեջ են ընկնում գույքը հանցավորին հանձնելու օրինական հիմքերի առկայության հարցում: Խաբեության այս տեսակը կոչվում է նաև պասիվ խաբեություն: Հարկ է ընդգծել, որ ճշմարտության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մասին լռելը քրեորեն պատժելի է այն դեպքերում, երբ հանցագործը պարտավոր էր տուժողին իրագրել կել այնպիսի հանգամանքների մասին, որոնց ինացության դեպքում տուժողը մոլորության մեջ չէր ընկնի:

Վստահությունը չարաշահելը՝ ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Հանցագործի նկատմամբ տուժողի վստահությունը կարող է բխել ինչպես նրանց միջև առկա պայմանագրից, լիազորագրից և այլն, այնպես էլ առաջանալ հանցավորի և գույքը հանձնողի անձնական հարաբերություններից, հանցավորի կողմից նախկինում դրսևորած վարքագծից, հանցավորի անձնավորությունից և այլն:

Պետք է նշել, որ արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով վայելի տուժողի վստահությունը, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզի տուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները: Խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմի վերաբերյալ իր դիրքորոշումը ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել և զարգացրել է նաև Վարդան Մարատի Մաթևոսյանի գործով 2012 թ. հունիսի 8-ին կայացված թիվ ԵՇԳ/0037/01/11 որոշման (այսուհետ՝ Վ. Մաթևոսյանի գործով որոշում) 24-րդ կետում, որտեղ դատարանն արձանագրել է, որ. «... օբյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները ստանձնելուն: ...»:

Խարդախության վերաբերյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից իրականացրած որոշակի դատողություններից նաև հետևում է, որ խարդախության հանցակազմի առարկա է նյութական աշխարհի այն իրը (առարկան), որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով և ենթակա է դրամական գնահատման: Այդպիսիք կարող են լինել այն ապրանքանյութական արժեքները, որոնք ունեն փոխանակման արժեք, գին, հանդիսանում են արժեքի դրամական արտահայտություն: Խարդախության առարկա չեն կարող լինել ոչ նյութա-

կան բնույթի արժեքները՝ գիտական աշխատությունները, տեղեկատվությունը, ծառայությունները և այլն: Հետևաբար, խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով աշխատանք կամ որոշակի ծառայություն ձեռք բերելը կամ պարտավորությունները չկատարելը չեն կարող որակվել որպես խարդախություն:

Լ. Ավետիսյանի գործով որոշման 26-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ. «Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով»: Խարդախությունը կատարվում է բացառապես ուղղակի դիտավորությամբ, ինչը նշանակում է, որ հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա: Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորը նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: Հակառակ դեպքում, գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն՝ առաջանում է գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցակազմը բացակայում է: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ խարդախության միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության և գույքը հափշտակելու շահադիտական նպատակի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն գործով ձեռք բերված ապացույցների համակցության վրա: Նշված ապացույցների գնահատման արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաստատված համարի, որ անձն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը, և, եթե դա ապացուցվի, ապա խարդախության հանցակազմն առկա է: Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում, որ շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ, ապա նման դեպքերում խարդախության հանցակազմն առկա չէ:

Խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերաբերյալ իր դիրքորոշումը ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել և զարգացրել է Վ. Մաթևոսյանի գործով որոշման 25-րդ կետում, որ-

տեղ դատարանն արձանագրել է, որ. «... խարդախությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, ինչը ենթադրում է, որ հանցավորը գիտակցում է, որ խաբեության կամ վատահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև նախատեսում և ցանկանում է դա: Միևնույն ժամանակ, խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքին կամ գույքային իրավունքին տիրանալը հանցավորը նպատակ է ունենում հափշտակել այն, չվերադարձնել գույքը, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: ...»: Մեջբերված դատողությունից հետևում է, որ խարդախության մեղադրանքով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ապացույցների բավարար ամբողջությամբ հիմնավորել, որ հանցավորը դիտավորություն է ունեցել խաբեության կամ վատահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը:

Խարդախություն կատարելու՝ անձի դիտավորության ապացուցման կապակցությամբ, Վ. Մաթևոսյանի գործով որոշման 27-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ. «... յուրաքանչյուր դեպքում գործով ձեռք բերված ապացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ պետք է հիմնավորվի, որ անձը նպատակադրված չի եղել իրականացնելու իր ստանձնած քաղաքացիաիրավական պարտավորությունները և ցանկացել է խաբեության կամ վատահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը: Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հաստատվում վերոգրյալը, ապա անձի արարքում բացակայում է խարդախության հանցակազմը, հետևաբար նրան պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով»:

Մասնավոր-իրավական պարտավորությունների հետ հարաբերակցության մեջ խարդախության հանցակազմը ՀՀ վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Լ. Ավետիսյանի գործով որոշման մեջ: Այս համատեքստում դատարանը քննարկել է այն հարցը, թե ինչ հատկանիշների հիման վրա է սահմանազատվում խարդախության հանցակազմը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից: Մասնավորապես, Լ. Ավե-

տիսյանի գործով որոշման 32-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «... սեփականության անձեռնմխելիությունը հիմնարար սահմանադրական արժեք է, ուստի խարդախության վերաբերյալ դատական քաղաքականության համար պետք է անկյունաքարային նշանակություն ունենա սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը»: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի կողմից իր գույքային պարտավորությունների չկատարումը դեռևս չի վկայում, որ նա ունի հանցանքի կատարման դիտավորություն: Այլ խոսքով՝ անձի կողմից ստանձնած քաղաքացիաիրավական պարտավորության չկատարումը դեռևս չի վկայում վերջինիս արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի, հետևաբար նաև խարդախության հանցակազմի առկայության մասին: Նշված հանգամանքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված խարդախության հանցակազմը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելու հետևյալ չափանիշները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վատահությունը չարաշահելու մտադրություն անձն ունենում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը,

բ) խարդախության դեպքում անձի՝ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

Վերոնշյալ չափանիշներն ու մոտեցումները հիմք ընդունելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Վ. Մաթևոսյանի գործով որոշման 25-րդ կետում արձանագրել է, որ. «... խարդախությունը և քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտումն օբյեկտիվ կողմի հատկանիշներով հաճախ համընկնում են: Հետևաբար, պետք է նկատի ունենալ, որ խարդախությունը՝ որպես հանցագործություն, քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքերից տարբերվում է սուբյեկտիվ կողմով»:

Պետք է նշել, որ այս համատեքստում՝ յուրացումը կամ վատնումը, խարդախության հանցակազմից տարբերվում են նրանով, որ երկու հանցագործությունների դեպքում էլ տեղի է ունենում գույքի կամավոր հանձնում, այն տարբերությամբ, որ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Եթե յուրացնելու կամ վատնելու ժամանակ հանցագործության սուբյեկտը սեփականատիրոջ կամ գույքը տիրապետող այլ անձին պատկանող գույքի նկատմամբ գտնվում է որոշակի իրավահարաբերությունների մեջ, ապա խարդախության դեպքում՝ ոչ:

Ինչպես յուրացնելու կամ վատնելու, այնպես էլ խարդախության դեպքում, գույքի սեփականատերը հանցավորին գույքը հանձնում է կամովին: Սակայն, ի տարբերություն առաջինի, խարդախության դեպքում սեփականատերը գտնվում է մոլորության մեջ և գույքը հանձնելիս՝ գույքը վերցնողին, որևէ օրինական լիազորությամբ չի օժտում: Եթե խարդախության դեպքում հանցավորը, հենց սկզբից, նպատակ է ունենում հափշտակելու ուրիշին պատկանող գույքը, ապա յուրացնելու կամ վատնելու դեպքերում՝ այն բացակայում է: Այլ կերպ ասած՝ յուրացնելու կամ վատնելու դեպքում, գույքի նկատմամբ լիազորությունները հանձնելու նախաձեռնությունը հանցավորին չի պատկանում: Հեղինակներից՝ Պ.Ս. Յանին, հատկապես նկատի ունենալով այս հանցագործության առանձնահատկությունը, գույքի յուրացումը կամ վատնումը անվանել է նույնիսկ «հափշտակության խաբեբայական ձևեր»¹²:

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ խնդիր է առաջանում նաև շահադիտական շահագրգռվածությունից ելնելով պաշտոնեական լիազորությունները չարաշահելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարվող հափշտակություններից (խարդախությունից և յուրացումից կամ վատնումից) սահմանազատելու կապակցությամբ: Նշված հանցագործությունների սահմանազատման հիմնական չափանիշն այն է, որ *պաշտոնեական լիազորությունները շահադիտական շարժառիթով չարաշահելու դեպքում պետք է բացակայեն հափշտակության հատկանիշները (կամ դրանցից գոնե մեկը)*: Այսինքն, եթե, լիազորությունները չարաշահելով, ապօրինի վերցվում է ուրիշի գույքը, բայց ոչ անհատույց, արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածով: Հակառակ պարագայում, բնականաբար, արարքը պետք է որակվի որպես պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հափշտակություն: Այսպես, օրինակ՝ եթե պետական կազմակերպության գլխավոր հաշվապահը ժամանակավոր օգտագործման (հետագայում վերադարձնելու) նպատակով կազմակերպության դրամարկղից միջոցներ է վերցնում, նրա արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, որակվում է միայն որպես պաշտոնեական լիազորությունների չարաշահում: Մինչդեռ ժամա-

նակ, եթե նույն անձի կողմից դրամական նշված միջոցները վերցվելին իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելու նպատակով, նրա արարքը կորակվեր միայն որպես պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացում կամ վատնում¹³:

Որոշակի նմանություններ առկա են նաև՝ խարդախության (ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդված) և սպառողներին խաբելու (ՀՀ քր. օր.-ի 212-րդ հոդված) հանցակազմերի միջև: Ե՛վ խարդախության, և՛ սպառողներին խաբելու դեպքերում հանցավորը՝ խաբեությամբ, ապօրինի և անհատույց տիրանում է ուրիշի գույքին: Սակայն, նշված հանցագործությունները միմյանցից տարբերվում են իրենց՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ հատկանիշներով: Սպառողներին խաբելու հանցակազմի սուբյեկտ են համարվում ապրանքներ իրացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների կամ առևտրի (ծառայությունների) ոլորտում որպես անհատ ձեռնարկատեր գրանցված անձինք, իսկ խարդախության դեպքում՝ ցանկացած անհատ: Սպառողներին խաբելու հանցակազմի օբյեկտը՝ տնտեսական գործունեության և սպառողների գույքային շահերը ապահովող հասարակական հարաբերություններն են, իսկ խարդախության օբյեկտը, ինչպես ցանկացած հափշտակության դեպքում, հանդիսանում են սեփականության հարաբերությունները: Նշվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ խարդախության հանցակազմի սուբյեկտ կարող են հանդես գալ ցանկացած անձինք՝ բացառությամբ առևտրի ոլորտում ընդգրկված և վերևում մեջբերված անձանցից: Խարդախության հանցակազմի սուբյեկտը ընդհանուր է: Այն կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

Խարդախության հանցակազմի շուրջ իրականացվող քննարկումների շրջանակներում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև *կաշառք ստանալու պատրվակով* իրականացված խարդախությունը. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» 30.04.08թ. ՀՀ օրենքով (ՀՕ-49-Ն)՝ ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվեց 5-րդ կետով, և որպես խարդախության ծանրացուցիչ հանգամանք, նախատեսվեց խարդախության կատարումը՝ «*կաշառք ստանալու պատրվակով*»:

Նշված օրենքի նախագծին կցված տեղեկանք-հիմնավորման (Կ-178-26.11.2007-ՊԻ-010/0) մեջ նշվում է. «... պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ ապօրինի վարձատրություն (կաշառք) տվողի օգտին ցանկալի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից ձեռն-

պահ մնալու նպատակով ապօրինի վարձատրություն (կաշառք) ստացող անձը ոչ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված պաշտոնատար անձ է և ոչ էլ պետական ծառայող, որպիսի պայմաններում նրա գործողությունները որակվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով՝ որպես խարդախություն, և փաստացի «կաշառք» ստացող նման անձինք մեղմ պատիժներ են ստանում, չնայած այն հանգամանքին, որ նման գործողություններով ոտնձգվում է ոչ միայն ուրիշի գույքը, այլ ոտնահարվում է նաև պետական իշխանության հեղինակությունը:

Պրակտիկայում հանդիպող նման իրավիճակներում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և արարքին անհրաժեշտ իրավական գնահատական տալու նպատակով, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը լրացնել նոր՝ 311.1 և 311.2 հոդվածներով, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 4-րդ կետով¹⁴ (նշված՝ «4-րդ» կետի վերաբերյալ նշումը, հավանաբար վրիպակ է):

Այն, որ խաբեությամբ՝ որպես պաշտոնատար անձ ներկայացած և կաշառք ստանալու պատրվակով ուրիշի գույքին տիրացած մասնավոր անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել կաշառք ստանալու համար, բխում է հատուկ սուբյեկտով հանցագործությունների որակման կանոններից: Մասնավորապես, եթե հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձն իր նախաձեռնությամբ իրականացրել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը, ապա նա կարող է պատասխանատվության ենթարկվել միայն ընդհանուր սուբյեկտով այնպիսի հանցագործության համար, որի օբյեկտիվ կողմը նույնանում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի հետ: Դրանից ելնելով՝ նման արարքները դատական պրակտիկայում որակվում են որպես խարդախություն:

Խարդախություն պետք է որակել նաև այն պաշտոնատար անձի արարքը, ով ի սկզբանե մտադրություն չունենալով իր լիազորությունների օգտագործմամբ որևէ գործողություն կատարել անձի օգտին կամ չունենալով այդպիսի գործողություն կատարելու օբյեկտիվ հնարավորություն, կաշառքի պատրվակով նրանից ստանում է նյութական արժեքներ և տիրանում դրանց:

Եթե փորձեր վերը նշված միտքը ընդհանրացնել, ապա ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում նշված կաշառք ստանալու պատրվա-

կով իրականացված խարդախությունը՝ պաշտոնատար (կամ ոչ պաշտոնատար) անձի կողմից խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով, անձամբ կամ միջնորդի միջոցով՝ իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալու պատրվակով կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին, իր լիազորությունների շրջանակում, որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու, կամ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորություն կամ թողտվություն կատարելու համար խարդախությամբ ստացված կաշառքն է: Այս հանցակազմի շրջանակներում, հանցավորի կատարած գործողություններն, իրենց բնույթով, պետք է ոչ միայն շահադիտական նպատակ հետապնդեն, այլ՝ ձևավորեն հափշտակության *հանցակազմ*: Եթե՝ ՀՀ քր. օր.-ի 311-րդ հոդվածով պաշտոնատար անձ հանդիսացող սուբյեկտին, կաշառքը տրվում է վերջինիս լիազորությունների մեջ մտնող այնպիսի կոնկրետ գործողության կամ անգործության կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալու համար, որոնք պաշտոնատար անձը կարող է կատարել իր լիազորություններն օգտագործելով, ապա ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում նշված՝ *կաշառք ստանալու պատրվակով* հատկանիշի դեպքում, հանցավորը, որը նշված պարագայում նույնպես կարող է հանդիսանալ պաշտոնատար անձը, գույքը կամ այն նյութական արժեքները, որոնք պարտադիր պետք է հանդիսանան հափշտակության առարկա, վերցնում է ոչ թե ՀՀ քր. օր.-ի 311-րդ հոդվածում նկարագրված ենթադրվող գործողությունը կամ անգործությունը կատարելու, այլ առանց դրանք կատարելու իրական մտադրության՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակություն կատարելու համար:

Սակայն, պետք է նշել, որ խարդախության հանցակազմում՝ «կաշառք ստանալու պատրվակով» հատկանիշի առկայությունը (ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ), որը՝ «հատվում է» նաև նույն հանցակազմում նախատեսված «պաշտոնեական դիրքն օգտագործելով» հատկանիշի հետ (ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1 կետ), բավարար չափով պատճառաբանված ու նպատակային չէ և նշված հանցակազմում այդպիսի արարքի լրացուցիչ նախատեսումը բազմակողմանի և հիմնավոր վերլուծության կարիք ունի: Պետք է փաստել, որ օրենքն, այս առումով, թերի է՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ոչ ճիշտ և լրացուցիչ օրենսդրական կատարելագործման կարիք ունի:

Ելնելով օրենսդիրի կողմից սահմանած խարդախության հանցակազմի տրամաբանական կառուցվածքից՝ թերևս խարդախության հանցակազմի «կաշառք ստանալու պատրվակով» հատկանիշը, պետք է նշված հանցակազմից ընդհանրապես վերացնել:

Հարկ է նաև նշել, որ խարդախության հանցակազմի՝ «կաշառք ստանալու պատրվակով» ծանրացնող հանգամանքի ձևակերպման հետ կապված եղել է առաջարկ այն խմբագրել հետևյալ կերպ. «*կաշառքի կամ հանրային ծառայողի ապօրինի վարձատրության պատրվակով*», նպատակ հետապնդելով առավել խիստ պատժողական քա-

ղարականություն որդեգրել խաբեությամբ որպես պաշտոնատար անձ ներկայացող և կաշառք ստանալու անվան տակ ձեռք բերված գույքը հափշտակելու եղանակով կատարվող խարդախությունների համար՝ նկատի ունենալով դրանց արդյունքում պետական իշխանության հեղինակության ոտնահարումը՝ որպես արարքի հանրային վտանգավորությունը բարձրացնող հանգամանք¹⁵:

¹ Տե՛ս, Завидов Б.Д. Обычное мошенничество и мошенничество в сфере высоких технологий, практическое пособие, М., 2002г., С. 4, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики, ЭКЗАМЕН, М., 2002г., С. 318, Гусев О.Б., Завидов Б.Д., Коротков А.П., Слюсаренко М.И. Преступление против собственности, ЭКЗАМЕН, М., 2001г., С. 47.

² Տե՛ս, Уголовное право России /части общая и особенная/, учебник для бакалавров, издание второе, переработанное и дополненное, ответ. ред. док. юрид. наук, проф., заслуженный деятель науки РФ А.И. Парог, М. 2017г., С. 371.

³ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2004թ., էջ 327:

⁴ Տե՛ս, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, 6-е издание, под редакцией заслуженного деятеля науки РФ, док. юрид. наук, профессора В.Т. Томина, канд. юрид. наук, доцента В.В. Сверчкова, ЮРАЙТ, М., 2010г., С. 529.

⁵ Տե՛ս, Булатов С.Я., Филимонова А.А. Ответственность за преступления против социалистической собственности по Уголовному кодексу Казахской ССР, Алма-Ата, 1964г., С. 35.

⁶ Տե՛ս, Гусев О.Б., Завидов Б.Д., Коротков А.П., Слюсаренко М.И. Преступление против собственности, ЭКЗАМЕН, М., 2001г., С. 51.

⁷ Տե՛ս, Владимиров В.А. Квалификация похищений личного имущества, Юрид. лит., М., 1974г., С. 98.

⁸ Տե՛ս, Уголовное право /особенная часть/, учебник для бакалавров, издание третье, переработанное и дополненное, под редакцией док. юрид. наук, проф. А.И. Чучаева, М. 2018г., С. 128.

⁹ Տե՛ս, Комментарий к уголовному кодексу Российской Федерации /подстатейный/, 2-е издание, ТОМ 1, Российская академия правосудия, под. ред. док. юрид. наук, проф., заслуженного юриста РФ А.В. Бриллиантова, М. 2017г., С. 594.

¹⁰ Տե՛ս, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, издание одиннадцатое, переработанное и дополненное, ответ. ред. док. юрид. наук, проф., заслуженный деятель науки РФ А.И. Парог, М. 2017г., С. 343.

¹¹ Տե՛ս, Бойцов А.И. Преступления против собственности, теория и практика уголовного права и уголовного процесса, Санкт-Петербург, Юридический центр Пресс, 2002г., с. 322, Уголовное право /особенная часть/, учебник для бакалавров, издание третье, переработанное и дополненное, под редакцией док. юрид. наук, проф. А.И. Чучаева, М. 2018г., С. 129.

¹² Տե՛ս, Яни П.С. Мошенничество и иные преступления против собственности, уголовная ответственность, ЗАО Бизнес-школа, Интел-Синтез, М., 2002г., С. 57.

¹³ Տե՛ս, «Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» /գիտագործնական մեկնարանություններ/, ՀՀ հատուկ քննչական ծառայություն, գիտական խմբագրությամբ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, արդարադատության գեներալ-լեյտենանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ վաստակավոր իրավաբան Վ.Գ. Շահինյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 2015թ., էջ 35:

¹⁴ Տե՛ս, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2659&Reading=0#> էլեկտրոնային տեղեկատվական կայք էջը:

¹⁵ Տե՛ս, Գրիգորյան Ա. Փ. Խարդախությունների դեմ պայքարի հիմնախնդիրները ՀՀ-ում, ԵՊՀ (իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, սեղմագիր), Երևան, 2014թ., էջ 8:

ԱՐԱԿ ԱՏԼԱՆՅԱՆ

Заместитель начальника отдела криминалистических исследований Экспертно-криминалистического управления Полиции РА, подполковник полиции, кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Некоторые особенности уголовно-правовой квалификации хищения имущества путем мошенничества

Автором были рассмотрены вопросы, касающиеся особенностей уголовно-правовой квалификации и сущности мошенничества как преступления, направленного на собственность. В статье обсуждаются как точки зрения, касающиеся проблем определения состава преступления, указанного в правовой литературе, мнения и анализы разных авторов, так и правовые позиции Кассационного Суда РА, относительно рассматриваемого вопроса.

В результате проведенных исследований со стороны автора были сделаны предложения, которые могут иметь важное значение для реформ Уголовного кодекса РА и квалификации преступлений по делам мошенничества.

Ключевые слова: *мошенничество, обман, злоупотребление доверием, состав преступления, имущество, хищение, под предлогом взятки.*

ԱՐԱԿ ԱՏԼԱՆՅԱՆ

Police Colonel and Deputy Head of the Subdivision of Criminal Scientific Researches of the Expert- Criminal Department of the RA Police, Candidate of Law,

SUMMARY

Certain peculiarities of criminal and legal qualification of the property theft through swindling

Questions concerning the criminal and legal essence and qualification of the peculiarities of swindling as a crime against the property have become subject for discussion by the author. In the Article were discussed views concerning to the elements of crime’s issues of the qualification mentioned in the legal literature expressed opinions and analysis by different authors as well as expressed legal positions by the RA Court of Cassation on the issue under discussion.

In the result of study made by the author were represented suggestions which may be important for qualification of the crimes in the cases of reforms and swindling of the RA Criminal Code.

Key words: *swindling, cheat, abuse of confidence, elements of crime, property, theft, pretext to get a bribe.*